

Ս  $\frac{11}{936}$

23.00.02

ՀՀ ՊՆ Դ. ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԼԵՔՍԱՆԴԻ ՌՈՔԵՐՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԶԻՆՎՈՐԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ-  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»  
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Վ. Աբանեսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ Ս. Տ. Քոչարյան

քաղաքական գիտությունների թեկնածու, Հ. Ռ. Նիկողոսյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ՊՆ Վ. Մարգարյանի անվան ռազմական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2014թ. դեկտեմբերի 17-ին, ժամը 16:00, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ում գործող ՀՀ ԲՈՀ-ի 056 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, 0037 Երևան, Ուլնեցու փողոց 56/6:  
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. նոյեմբերի 14-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
Պատմական գիտությունների դոկտոր *Պ. Ա. Զորանյան*



### ԱՏԵՆԱՍՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՃԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը.** Մարդկային պատմության զարգացման վաղ շրջանից սկսած՝ զինված ուժերը, ռազմիկների խմբերը, զորքերը (անկախ նրանց անվանումից, հաստատությունական բնույթից և կառուցվածքից) օգտագործվել են հարձակվողական պատերազմներ վարելու, տարածքային սահմանների պաշտպանության, ինչպես նաև ներքին խռովությունները և հուզումները ճնշելու նպատակով: Մակայն մինչև 19-րդ դարը չկար հստակ տարանջատում, մի կողմից զինված ուժերի և օրենքի շրջանակից դուրս գործող զինված խմբերի (ինչպես, օրինակ՝ ավազակախմբերը կամ ծովահենները) միջև, մյուս կողմից՝ զինված ուժերի և քաղաքացիական բնակչության միջև: Մոցիալ-քաղաքական խմբերի հստակ տարանջատման բացակայության պատճառով հիմնականում միաձուլված էին նաև քաղաքացիական և զինվորական իշխանությունները: Զինված ուժերի գործունեության շրջանակը հստակ սահմանված և սահմանափակված չէր և առավելապես պայմանավորված էր պետության եզրույթամբ, ինչպես նաև կախված էր ղեկավարի, առաջնորդի կամ կառավարող դասի կամքից ու ցանկությունից, ըստ այդմ՝ շատ հաճախ կիրառվում էր որպես ներքին բռնության գործիք: Հետագայում՝ անգամ պետության կողմից ստանդարտացված հարկային և ծախսային մեխանիզմի վրա հիմնված ռազմական հիերարխիկ կազմակերպության ստեղծման արդյունքում, զինված ուժերի կողմից բռնության կիրառումը մենաշնորհի էր իրավաքաղաքական հստակեցումից հետո էլ զինված ուժերի պրակտիկական բնույթը եական փոփոխության չի ենթարկվել: Ավելին՝ տեխնիկական-արդյունաբերական զարգացմանը զուգահեռ զինված ուժերը ձեռք են բերում ավելի արդիականացված բնույթ, որի արդյունքում զինված ուժերի՝ քաղաքականության մեջ ներգրավվելու փորձերը լայն տարածում են ստանում և շատ դեպքերում անգամ զուգակցվում են քաղաքական իշխանության ամբողջական գավթամբ:

Վերջին երկու տասնամյակների զարգացումների վերլուծությունից բխում է, որ զինվորաքաղաքացիական հարաբերությունները ոչ միայն չեն կորցնում իրենց արդիականությունը, այլև ձեռք են բերում նոր դրսևորումներ, որոնց ուսումնասիրությունը պահանջում է էլ ավելի համակարգային ու բազմակողմ մոտեցումներ:

Նախ ամբողջատիրական վարչակարգերից ժողովրդավարության անցումը երկարատև ու բազմաշերտ գործընթաց է, որը հաճախ արգելակում է «անցումային» փուլում, ուստի, ժողովրդավարության հաստատման երկար գործընթացում զինված ուժերն այս կամ այն չափով բերելով քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության ներքո, այնուհետև անհրաժեշտություն է առաջանում կատարելագործել պետության կողմից զինված ուժերի արդյունավետ քաղաքացիական կառավարման կարողությունները, որպեսզի կրկին նպաստավոր պայմաններ չստեղծվեն քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության թոթափման և իշխանության գավթման համար: Մա ենթադրում է զինվորաքաղաքացիական հարաբերությունների նոր տիպաբանության մշակում և զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության դասական մեխանիզմների վերանայում ու հարմարեցում արդի պայմաններին:

Բացի այդ, անցումային փուլում գտնվող կամ այդ փուլը չհաղթահարող կեղծ-ժողովրդավարական վարչակարգերում ձևականորեն վնասազերծվում են զինված ուժերի՝ քաղաքական իշխանությանը միջամտելու կամ այն գավթելու կարողությունները, ինչը դասական տեսանկյունից զինվորաքաղաքացիական հարաբերությունների հիմնական հիմնախնդիրն է, սակայն զինված ուժերը ծայրահեղ քաղաքականացման միջոցով կարող են վերածվել իշխող քաղաքական ուժի

շահերը սպասարկող ռեսուրսային կցորդի, որի կողմից մատուցվող ծառայությունները կարող են տարբերվել՝ սկսած իշխող քաղաքական ուժի գաղափարախոսությունը ռազմահայրենասիրական մոտիվներով արդարացնելուց ու հարստացնելուց, վերջացած բանակի մեծաքանակ անձնակազմի միջոցով պարզ ընտրազանգվածի ապահովումով: Կարող է լինել նաև հակառակը, երբ զինված ուժերը քաղաքական մասնավոր շահերը սպասարկելու նպատակով բացարձակ ապաքաղաքականացվում են՝ զրկվելով պաշտպանական-անվտանգային քաղաքականության ոլորտում որոշումների կայացմանը ինչ-որ կերպ մասնակցելու հնարավորությունից, վերածվելով իներտ և հեշտ կառավարելի մի մարմնի, որին պետական իշխանության անունից, հրամանի միջոցով կարելի է ուղղորդել դեպի նեղ խմբային շահեր սպասարկող գործողությունների իրականացումը: Դա կարող է արտահայտվել քաղաքական իշխանությունը կրող ուժի շահերից բխող ռազմական արկածախնդրության մեջ ներքաշման, մասնավոր շահերից բխող, սակայն պետության միջոցներն անհարկի վատնող և տնտեսագիտորեն սխալ հաշվարկված ռազմական նշանակության արտադրանքի գնումների իրականացման, ռազմարդյունաբերական ոչ արդյունավետ նախագծերի զարգացման և այլ նմանատիպ ձևերով: Սա, այլ կերպ ասած, զինվորաքաղաքացիական հարաբերությունների հավասարակշռության խախտման հակառակ օրինակն է, երբ քաղաքացիական բաղադրիչի կողմից դիտավորյալ կերպով սահմանափակվում են զինված ուժերի քաղաքական մասնակցության թույլատրելի շրջանակները, մինչդեռ զինված ուժերը, հանդիսանալով պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի ընդհանուր կառավարման ներքո գործող բաղադրիչ, հանդիսանում են այդ ոլորտում պետական քաղաքականության մշակմանը մասնակցող և իրականացնող սոցիալական ինստիտուտ, ուստի իրենց իրավագործությունների պատշաճ կատարումն ապահովելու համար չեն կարող ի սպառ ապաքաղաքականացվել:

Այդ որում, զինված ուժերի ապաքաղաքականացումը զինվորաքաղաքացիական հարաբերությունների համատեքստում երբեք էլ չի դիտվել որպես այդ հարաբերությունների հաջողվածության նախապայման, քանի որ զինված ուժերն իրենց լիազորությունների շրջանակում պարտավոր են մասնակցել պետական քաղաքականությանը և պրոֆեսիոնալ եզրակացություններով հաստատել կամ հերքել այս կամ այն քաղաքական և/կամ դիվանագիտական գործընթացի հիմնավորվածությունը: Այդ պատճառով քաղաքագիտական և իրավաբանական տեսական կամ նորմատիվ աղբյուրներում ամրագրվում է ոչ թե զինված ուժերի ապաքաղաքականացվածությունը, այլ քաղաքական չեզոքությունը:<sup>1</sup>

Եվ վերջապես, արտաքին վտանգների նվազման արդյունքում պետությունները փորձ են անում զինված ուժերը քաղաքական հարցերից հեռու պահելու համար նրանց համար զբաղվածությունը նոր ոլորտներ ստեղծել: Ձինված ուժերը սկսում են արդյունավետորեն գործել իրենց համար ոչ ավանդական գործառույթների ոլորտներում, ինչպիսիք են խաղաղապահությունը, թրաֆիքինգի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, արտակարգ իրավիճակների կանխարգելումն ու հետևանքների վերացումը, և անգամ պետության ներսում հասա-

րական կարգի պահպանման հարցերում ուստիականական ուժերին աջակցության տրամադրումը: Սակայն սա վտանգավոր ու չկոռադատված մոտեցում է, քանի որ ստացվում է, որ պետությունները մեծ դժվարությամբ սահմանափակելով զինված ուժերի ներքին ազդեցության շրջանակները և նրանց բացառապես քաղաքական հարցերին ներգրավվելուց հեռու պահելու համար ուշադրությունը շեղելու նպատակով օժտելով ներքին նոր գործառույթներով կրկին հնարավորություն են տալիս զինված ուժերին արհեստականորեն ընդլայնել իրենց ներգրավման շրջանակները, միջամտել կամ ակտիվ մասնակցություն ունենալ իրենց գործունեության հետ անմիջականորեն չառնչվող նոր ոլորտներում, որը կարող է հանգեցնել բազմաձև ու բազմաբնույթ քաղաքական հարցերին զինվորականների անհարկի միջամտության և անգամ նրանց կողմից իշխանության զավթման:

Այսպիսով՝ պատմաքաղաքական զարգացումների արդյունքում տեղի ունեցող քաղաքական ինստիտուտների և գործընթացների ինտենսիվ ձևափոխման պարագայում անգամ արդիական է մնում զինված ուժերի քաղաքական դերի հստակեցման, զինված ուժերի կողմից քաղաքական իշխանության հնարավոր զավթման և այդ միտումների վերահսկման ու բացառման օբյեկտիվ օրինաչափությունների վեր հանումը, որն ամփոփվում է զինվորաքաղաքացիական հարաբերությունների տեսության շրջանակում: Սա հասկապես վերաբերում է այն պետություններին, որոնց անկախացումն ու ժողովրդավարացումը զուգորդվում է պետական իշխանության մարմինների և ուժի կիրառման ավանդական մեխանիզմների փոխակերպումներով: 22-ում դա արտահայտվում է զինված ուժերի կողմից անկախության երաշխավորման կարևորագույն գործառույթների ստանձնման և պետականաշինության հարցերում լուրջ ավանդի ներդրմամբ, որի համատեքստում արդի հայաստանյան քաղաքական կյանքում զինված ուժերի դերի, նշանակության, դրանց վերահսկողության մեխանիզմների ձևավորման հարցերը կարևոր քաղաքագիտական և կիրառական-քաղաքական հիմնախնդիրներից են, որոնց բացահայտմանը, ուսումնասիրմանն ու լուծմանն է նվիրված սույն առեկախությունը:

**Հետազոտության օբյեկտը** զինված ուժերն են՝ բռնության ինստիտուցիոնալացման, հասարակության զինվորական բաղադրիչի ձևավորման և պետականաշինության կապի, զինված ուժերի կառուցվածքագործառնական շրջանակների հստակեցման, սոցիալ-քաղաքական այլ ինստիտուտների հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ժողովրդավարական արժեհամակարգի տարածման համաշխարհային շարժերի համատեքստում:

**Հետազոտության առարկան** զինվորաքաղաքացիական հարաբերությունների և զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության դրաներումներն են՝ ներառյալ մոդելները, մեխանիզմները, նպատակներն ու գործառույթները, բանակ-հասարակություն փոխհարաբերություններում զինված ուժերի գործառույթների արդիականացումը, ժողովրդավարացման համատեքստում զինվորաքաղաքացիական հարաբերությունների փոխակերպումները: Դրանց տարրերն են կազմում այնպիսի գործընթացներ ու երևույթներ, ինչպիսիք են բռնության լեգիտիմացումը, հասարակությունից զինվորականների խմբի պայմանական առանձնացումը և զինված ուժերը գործառույթային շրջանակով բռնություն կիրառող այլ ինստիտուտներից տարանջատումը, ինչպես նաև զինվորականների քաղաքական ու տնտեսական ազդեցության սահմանափակման սանկցիավորումը: Միջազգային գիտահետազոտական և քաղաքական-կիրառական փորձի վերհանման և ուսումնասիրության միջոցով սույն առեկախության առարկան բնեռված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի

<sup>1</sup> Տես, օրինակ՝ 22 Սահմանադրության 8.2 հոդված. Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Ձինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և զուգակցում են քաղաքացիական վերահսկողության ներքո:

բարեփոխումների գործընթացի վրա՝ արդի պայմաններում ՀՀ-ում զինվորա-  
քաղաքացիական հարաբերությունների քաղաքացիական-ժողովրդավարական  
վերահսկողության հիմնախնդիրների բացահայտման և լուծման նպատակով:

**Ատենախոսության նպատակներն ու խնդիրները.** ատենախոսությունը նպա-  
տակն է՝ պարզել զինվորաքաղաքացիական հարաբերությունների առաջացման և  
զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները և դրանցում զինված ուժերի քաղա-  
քացիական-ժողովրդավարական վերահսկողության ինստիտուտի ձևավորման,  
դերի և գործառնման առանձնահատկությունները: Ատենախոսական աշխատան-  
քն ուղղված է զինվորաքաղաքացիական հարաբերությունների տեսության շրջա-  
նակից նախկինում դուրս մնացած կամ քիչ ուսումնասիրված, արդի պայման-  
ներում էական նշանակություն ներկայացնող երևույթների բացահայտման և հե-  
տազոտման միջոցով զինվորաքաղաքացիական հարաբերությունների քաղաքա-  
գիտական և միջառարկայական ուսումնասիրության հենքի հարստացմանը,  
ստացված արդյունքների հիման վրա, զինվորաքաղաքացիական հարաբերու-  
թյունների չափորոշիչների հստակեցմանը, և համապատասխան քաղաքական  
ուղենիշերի առաջարկմանը:

Մույն նպատակն իրագործվում է ներքոհիշյալ խնդիրների լուծման միջոցով.

1. վեր հանել զինված ուժերի, որպես սոցիալ-քաղաքական առանձնահա-  
տուկ ինստիտուտի ձևավորման և քաղաքացիական բաղադրիչից դրա ձևական  
տարանջատման գործընթացը,
2. պարզել բռնության ինստիտուտի դերը արդի պետությունների և զինված  
ուժերի ձևավորման ու կայացման հարցում,
3. սահմանազատել պետության կողմից կիրառվող լեգիտիմ բռնության  
ներքին և արտաքին դրսևորումներն ու հստակեցնել բռնության կիրառման  
հարցում զինված ուժերի գործառնության շրջանակը,
4. նկարագրել զինված ուժերի սոցիալ-քաղաքական ինստիտուտի ձևավոր-  
ման պատմաքաղաքական նախադրյալները,
5. վեր հանել զինվորական մասնագիտության ձևավորման ու զարգացման  
օրինաչափությունները,
6. սահմանել զինվորաքաղաքացիական հարաբերությունների տիրույթը
7. սահմանել “զինվորական” և “քաղաքացիական” բաղադրիչների տարան-  
ջատման չափորոշիչները և տալ բանակ-հասարակություն հարաբերությունների  
հավասարակշռության խախտման դեպքում հնարավոր սպառնալիքների ու ռիս-  
կերի շրջանակը,
8. հիմնավորել զինված ուժերի քաղաքական ներգրավման սահմանները,  
պարզաբանել զինված ուժերի կողմից քաղաքական իշխանության զավթման  
պատճառներն ու նախադրյալները,
9. վեր հանել զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերա-  
հսկողության բովանդակությունը, այդ թվում՝ զինված ուժերի “քաղաքացիական”  
և “ժողովրդավարական” վերահսկողության եզրույթները, գոյություն ունեցող  
սահմանումների մեկնաբանման և տեղայնացման միջոցով առաջարկել և  
հիմնավորել զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկող-  
ության նոր սահմանումը,
10. սահմանել զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերա-  
հսկողության մեխանիզմները և պարզաբանել դրանց դերը զինվորաքաղաքա-  
ցիական հարաբերությունների հավասարակշռության ապահովման հարցում,
11. վեր հանել զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերա-  
հսկողության միջազգային փորձը և մեխանիզմները,

12. բացահայտել զինվորաքաղաքացիական հարաբերությունների զարգաց-  
ման դինամիկան Հայաստանի Հանրապետությունում,

13. վեր հանել ՀՀ-ում զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական  
վերահսկողության մեխանիզմների ձևավորման դինամիկան և առանձնահատ-  
կությունները,

14. մշակել զինվորաքաղաքացիական հարաբերությունների հավասարա-  
կշռման և զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողու-  
թյան արդյունավետության բարձրացման առաջարկություններ:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը.** ատենախոսության խնդիրների  
արդյունավետ լուծման համար կիրառվել են ընդհանուր գիտական և քաղաքա-  
գիտական մեթոդներ և մոտեցումներ: Մասնավորապես, զինված ուժերի, որպես  
սոցիալ-քաղաքական ինստիտուտի կայացման և զարգացման, այդ սոցիալ-քաղա-  
քական գործընթացի հիմքում բռնության դերի պարզաբանման, ինչպես նաև զին-  
վորական մասնագիտության ու զինվորականների սոցիալական խմբի առանձ-  
նացման հարցերն ուսումնասիրվել են հիմնականում պատմահամեմատական,  
կառուցվաքաղաքագիտական և համակարգային մեթոդների կիրառմամբ:

Զինվորաքաղաքացիական հարաբերությունների մոդելների և զինված ուժերի  
քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների հետա-  
զոտման ընթացքում, հաշվի առնելով այդ մոդելների և մեխանիզմների բազմա-  
զանգվածային ու յուրաքանչյուր երկրում տարբեր գործոնների ազդեցության  
արդյունքում ձևավորված առանձնահատկությունները, պատմահամեմատական  
մեթոդը արդյունավետության բարձրացման նպատակով սերտ զուգակցվել է դեպ-  
քերի վերլուծության (case-study) մեթոդի հետ՝ հատուկ ուշադրություն հատկաց-  
նելով հայաստանյան իրականության խնդիրներին: Միջառարկայական մեթոդա-  
բանության տեսանկյունից, հետազոտության օբյեկտի հետ առնչվող իրավաքա-  
ղաքական հարցերի վերլուծության նպատակով կիրառվել է փաստաթղթերի  
վերլուծության մեթոդը՝ համապատասխան նորմերի մեկնաբանմամբ ու քննադա-  
տական դիտարկումներով: Մեթոդաբանական հիմքում առկա են նաև ինստիտու-  
ցիոնալ մոդելավորման և քաղաքագիտական կանխատեսման տարրեր:

**Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը:** Հարկ է նկատել, որ  
Նորհրդային Միության տոտալ գաղափարական վերահսկողության պայմաննե-  
րում ներքաղաքական հարցերում զինվորականների դերի վերաբերյալ տեսական  
ուսումնասիրություններ չէին իրականացվում, որոնց վրա անկախությունից հետո  
կարող էր խարսխվել հայաստանյան քաղաքագիտական միտքը: Այդ իսկ պատ-  
ճառով, հետխորհրդային տարածաշրջանում գրեթե չի սպառ բացակայում էին զին-  
վորաքաղաքացիական հարաբերությունների վերաբերյալ տեսական, համալիր  
հետազոտությունները: Թեև կան արևմտյան կամ նման կողմնորոշում ունեցող  
հեղինակներ, որոնք զբաղվում են հետխորհրդային տարածքում զինվորաքաղա-  
քացիական հարաբերությունների ուսումնասիրությամբ, սակայն դրանք հիմնա-  
կանում վերաբերում են հետխորհրդային Ռուսաստանում տիրող իրավիճակին,  
սակավ դեպքերում նաև՝ Ուկրաինային, որպես առավել մեծ ռազմական ներուժ  
ունեցող երկրների, որտեղ զինվորականներն ունակ են քաղաքականության վրա  
ազդելու և այդ ազդեցությունը կարող է տարածաշրջանային կամ միջազգային  
անվտանգության տեսանկյունից վտանգավոր համարվել:<sup>2</sup> Աղոս փորձեր են կա-  
տարվել նաև մասնավոր փորձագիտական մակարդակով համեմատական վերլու-

<sup>2</sup> Տե՛ս օրինակ Barylski R.V., The soldier in Russian politics, Duty dictatorship, and democracy under  
Gorbachev and Yeltsin, Transaction publishers, New Brunswick (USA), and London (UK), 1998, 523էջ:

ծուրան ենթարկել զինվորաքաղաքացիական հարաբերությունները հարավկովկասյան տարածաշրջանում, բայց դա առավելապես հենվում է զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների արդյունավետության գնահատման վրա և տեսական լուրջ արժեք չի ներկայացնում:<sup>3</sup>

Վերը նշված հանգամանքներով է պայմանավորված զինվորաքաղաքացիական հարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելիս հիմնականում արևմտյան, և հատկապես՝ ամերիկյան քաղաքագիտական ու սոցիոլոգիական դպրոցների կողմից մշակված տեսություններին խորությամբ անդրադառնալու անհրաժեշտությունը, և միայն դրանց տեսական հենքից բխող եզրահանգումների վրա նոր հետազոտությունների կատարումը: Այդ մոտեցումն ընկած է նաև այս հետազոտության հիմքում:

Ինչ վերաբերում է հայաստանյան իրականությանը, ապա դարաբաղյան պատերազմի ընթացքում հայկական զինված ուժերի ձևավորումը և պատերազմից հետո պետակաշինության գործընթացին զինվորականների մասնակցությունը կարևոր ազդակ էր՝ Հայաստանի Հանրապետությունում զինվորաքաղաքացիական հարաբերությունների առանձնահատուկ փորձի և էվալյիրիկ կյուֆի ուսումնասիրության միջոցով զինվորաքաղաքացիական հարաբերությունների տեսության մշակման և զարգացման համար: Սակայն հայաստանյան գիտական շրջանակների ուղեծրում զինվորաքաղաքացիական հարաբերությունները, որպես միջառարկայական և հատկապես քաղաքագիտական հետազոտության օբյեկտ, և, մասնավորապես, զինվորաքաղաքացիական հարաբերությունների քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության առանձնահատկությունները, որպես համակարգային ուսումնասիրության առարկա, մինչ այժմ համարյա չեն եղել:

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ջանքերով և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի օժանդակությամբ 2011թ. լույս ընծայվեց «Հայաստանը և ժողովրդավարական վերահսկողությունը զինված ուժերի նկատմամբ. վերլուծություն և հետանկարներ» հոդվածների ժողովածուն, որում անդրադարձ է կատարվում անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների մասին ԵԱՀԿ վարքագծի կանոնադրի պահանջներին, ներկայացվում է զինված ուժերի քաղաքագիտական-ժողովրդավարական վերահսկողության Հայաստանի և միջազգային փորձը, տրվում են գործնական առաջարկություններ:<sup>4</sup> Այս աշխատանքը թեև նշանակալի դեր ունեցավ զինված ուժերի քաղաքագիտական-ժողովրդավարական վերահսկողության ոլորտում հայաստանյան փորձի վրա կուտակված գիտելիքի համակարգման տեսանկյունից, բայց գրեթե չէր անդրադառնում զինվորաքաղաքացիական հարաբերությունների խնդիրներին: Այդ բացը լրացվեց 2013թ. ՀՀ ՊՆ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջև համագործակցության ծրագրի շրջանակում հրատարակված «Բանակ և հասարակություն. Ժամանակակից հիմնախնդիրներ» ուսումնական ձեռնարկում, որում

առաջին անգամ մեծ տեղ է հատկացված զինվորաքաղաքացիական հարաբերությունների ընդհանուր հիմնախնդիրներին:<sup>5</sup>

Պետք է փաստել, որ այս ոլորտում քիչ թե շատ արժեքավոր հետազոտություններ անցկացրած տեսաբանների մասնագիտական շրջանակը չի սահմանափակվում քաղաքագիտությամբ, քաղաքագետներ, սոցիոլոգներ, անվտանգագետներ, պատմաբաններ, ժուռնալիստներ, ռազմական փորձագետներ և այլոք, իրենց մասնագիտական ներբերումն են ունեցել բանակ-հասարակություն փոխհարաբերությունների լայն շրջանակի առանձին ոլորտային հարցերի ուսումնասիրմանը: Սակայն, հենց այս միջառարկայական բնույթն է, որ նպաստում է տարաբնույթ մոտեցումներից սահուն անցմանը հետազոտությունների հատուկ ոլորտի և կոնկրետ տեսագործական խնդիրների լուծմանը: Զինվորաքաղաքացիական հարաբերությունները որպես առանձին ոլորտ սկսել են ուսումնասիրվել ամերիկացի երկու գիտնականների՝ Մ. Հանթինգտոնի<sup>6</sup> և Մ. Յանովիչի<sup>7</sup> աշխատություններում, 20-րդ դարի երկրորդ կեսերից սկսած: Նրանց մոտեցումներում առկա էր մեկ հիմնական տարբերություն. եթե Հանթինգտոնը զինվորաքաղաքացիական հարաբերությունների հավասարակշռման համար առաջնային էր համարում զինված ուժերի «օբյեկտիվ» վերահսկողությունը, որը ենթադրում էր զինվորականների մասնագիտական պրոֆեսիոնալիզացիա՝ գուցարդված քաղաքականությունից զինված ուժերի աստիճանական հեռացմամբ, ապա Յանովիչն ընդհակառակը պնդում էր, որ զինվորականները պետք է առավելագույնս ինտեգրվեն հասարակության այլ ոլորտներում, այդ թվում՝ քաղաքական, ինչը ենթադրություն կտա նրանց հստակեցնել իրենց քաղաքական ներգրավման շրջանակները և ինքնուրույնաբար ընկալել այդ գործընթացներից ինքնամեկուսանալու անհրաժեշտությունը: Ավելի ուշ, այս ուսումնասիրությունների արդյունքները մտարկելու և դրանք ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ աշխատանքներ են կատարվել Փ. Ֆիլերի<sup>8</sup>, Ռ. Շիֆի<sup>9</sup>, Մ. Կաիրոյի<sup>10</sup> կողմից, սակայն այդ ջանքերը սահմանափակվում են Հանթինգտոնի և Յանովիչի մոտեցումների քննադատությամբ, ըստ էության, չառաջադրելով խնդրի ուսումնասիրության նոր հետանկարներ կամ չուրվագծելով առավել արդիական և համալիր տեսություններ:

Այդ առումով առավել նորարարական է զինվորաքաղաքացիական հարաբերությունների տիպաբանության շուրջ գիտական հետաքրքրությունների աճը, որի շրջանակում հատուկ ուշադրություն է դարձվում նաև առանձին դեպքերի խորքային ուսումնասիրության մեթոդին: Հատկապես հիշատակման է արժանի ծագումով պակիստանցի ռազմական փորձագետ Ա. Միլիթայի հետազոտությու-

<sup>3</sup> Stu, Օրինակ՝ Alapshvili L., The civil-military relations and democratic control on armed forces in Caucasus Region - a comparative study. <http://www.nato.int/acad/fellow/97-99/alapshvili.pdf>

<sup>4</sup> Տե՛ս S. Huntington, The soldier and the state. The theory and politics of civil-military relations, The Belknap press of Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1959, 534 էջ:

<sup>5</sup> Janowitz M., The Professional Soldier: A Social and Political Portrait. The Free Press: New York, 1960, 464 էջ:

<sup>6</sup> Feaver P. D., The civil-military problematique: Huntington, Janowitz, and the Question of Civilian Control. «Armed Forces and Society», 1996, Vol. 23, N 2:

<sup>7</sup> Schiff R. L., The Military and Domestic Politics. A concordance theory of civil-military relations, New York, Routledge, 2008, 192 էջ:

<sup>8</sup> St. u Cairo M. F., «Civilian control of military», Democracy Papers, US Department of State, International information programs (<http://usinfo.org/zhtw/DOCS/Demopaper/dmpaper12.html>).

<sup>3</sup> Stu, Օրինակ՝ Alapshvili L., The civil-military relations and democratic control on armed forces in Caucasus Region - a comparative study. <http://www.nato.int/acad/fellow/97-99/alapshvili.pdf>

<sup>4</sup> Տե՛ս «Հայաստանը և ժողովրդավարական վերահսկողությունը զինված ուժերի նկատմամբ. վերլուծություն և հետանկարներ» ժողովածու (Հ. Քոթանյան, Վ. Խաչատրյան, Ա. Ավետիսյան, Վ. Ավետիսյան, Ա. Գաբուզյան և այլք), Երևան, Ասոդիկ հրատ., 2011թ., 106 էջ:

յունը<sup>11</sup>, որում վերջինս մանրամասնորեն դիտարկելով զինվորաքաղաքացիական հարաբերությունների տարբեր դրսևորումներ՝ մշակել է զինվորաքաղաքացիական հարաբերությունների գրեթե բոլոր հնարավոր տարբերակները հաշվի առնող տիպարանական սխեմա: Մակայն այս հետազոտության մեջ չափից ավելի մեծ տեղ է հատկացվում քաղաքականությանը ներգրավման միջոցով զինվորականների կողմից տևտեսական ազդեցության ձեռք բերման հարցերին, այլ կերպ՝ «Միլբիզ» (Military Bussiness) երևույթին, ինչի արդյունքում հետազոտության շրջանակից դուրս են մնում զինծառայողների քաղաքական ներգրավման սոցիալական, հոգեբանական, արժեհամակարգային և այլ կարևոր պատճառներ:

Այս ուսումնասիրություններին գուգահեռ մի շարք գիտնականներ, ի դեմս Գ. Մակայի<sup>12</sup>, Զ. Միլսի<sup>13</sup> և այլոց, էապես սնեովել են «Էլիտարիստական» (վերնախավային) տեսությունների և դրանցում զինվորականների ներգրավվածության հարցերին, սակայն այս մտեցումներում էլ գերիշխում է զինվորաքաղաքացիական հարաբերությունների հիմնախնդիրը բացառապես «վերնախավային» շրջանակում փոխհամաձայնության գալու միջոցով լուծելու միտումը, որն աչքաթող է առնում հասարակական այլ շերտերի, մասնավորապես՝ քաղաքացիական հասարակության կողմից զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ինստիտուտի զարգացումը: Այսպիսով, սույն հետազոտության շրջանակներում փորձ է արվում արցնել այս ոլորտում առկա տեսամեթոդաբանական բացերը և վեր հանելով քաղաքացիականություններում (այդ թվում՝ ՀՀ-ում) առկա զինվորաքաղաքացիական հարաբերությունների և զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության հետ կապված հիմնախնդիրները՝ առաջարկել դրանց լուծման քաղաքագիտական մոտեցումներ:

**Հետազոտության գիտական նորույթը.** Ատենախոսության շրջանակում առաջին անգամ փորձ է արվել զինվորաքաղաքացիական հարաբերությունների համակարգի ձևավորման միջազգային փորձի վերլուծության, ՀՀ-ում զինվորաքաղաքացիական հարաբերությունների և զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության ուսումնասիրության միջոցով հասնել գիտատեսական և գիտակիրառական նորույթ հանդիսացող հետևյալ արդյունքներին.

1. վեր են հանվել և հիմնավորվել բոնության ինստիտուտի դերը և գործառույթները՝ զինված ուժերի, որպես սոցիալ-քաղաքական առանձնահատուկ ինստիտուտի ձևավորման և քաղաքացիական բաղադրիչից դրա ձևական տարանջատման գործընթացում,

2. սահմանագատվել են պետության կողմից կիրառվող լեգիտիմ բոնության ներքին և արտաքին դրսևորումներն ու հստակեցվել բոնության կիրառման հարցում զինված ուժերի գործառույթների շրջանակը,

3. սահմանվել են զինվորաքաղաքացիական հարաբերությունների տիրույթը, զինվորական և քաղաքացիական բաղադրիչների տարանջատման չափորոշիչները,

4. հիմնավորվել են զինված ուժերի քաղաքական ներգրավման սահմանները, բանակ-հասարակություն հարաբերությունների հավասարակշռության խախտման դեպքում հնարավոր ռիսկերի շրջանակը, հստակեցվել է զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության բովանդակությունը.

այդ թվում՝ զինված ուժերի «քաղաքացիական» և «ժողովրդավարական» վերահսկողության եզրույթների բովանդակությունը,

5. առաջարկվել և հիմնավորվել է զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության նոր սահմանումը,

6. վեր են հանվել զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները, այդ թվում՝ զինված ուժերի վերահսկողությունը քաղաքական իշխանության մարմինների, քաղաքացիական հասարակության, ԶՆՄ-ների կողմից,

7. բացահայտվել են զինվորաքաղաքացիական հարաբերությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում,

8. հիմնավորվել է զինված ուժերում բարեկարգության ամրապնդման հայեցակարգի ներդրման և անհատական պատասխանատվության սկզբունքի զարգացման դերը՝ զինվորաքաղաքացիական հարաբերությունների հավասարակշռման հարցերում,

9. մշակվել են զինվորաքաղաքացիական հարաբերությունների հավասարակշռման և զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության արդյունավետության բարձրացման առաջարկություններ, այդ թվում՝ ի լրումն քաղաքացիական իշխանության կողմից իրականացվող վերահսկողության, խթանել քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործունեությունն այս ոլորտում, ներդնել զինվորական օմբուդսմենտի տիպի զինված ուժերից և գործադրից լիակատար անկախ ինստիտուտներ, կատարելագործել զինվորական պրոֆեսիոնալիզմի մոդելը՝ հիմնված զինվորական մասնագիտության և զինվորականների կողմից իրենց պաշտոնական դերի հստակ ընկալման կարողությունների զարգացման վրա, տարբեր մակարդակների զինվորական ղեկավար կազմի համար ներդնել քաղաքացիական հասարակության արջև պարտադիր անհատական հաշվետվողականության մեխանիզմներ և այլն:

**Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը.** Աշխատության տեսական նշանակությունը զինվորաքաղաքացիական հարաբերությունների մեխանիզմների վերհանման, արտերկրում և ՀՀ-ում դրանց առանձնահատկությունների ու քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության հետազոտման արդյունքում ստացված տեսական եզրահանգումների ներբերումն է քաղաքագիտական տեսության մեջ: Մասնավորապես, քաղաքական ինստիտուտների և գործընթացների ուսումնասիրության տիրույթը համարվում է արդի պետություններում զինված ուժերի և քաղաքական իշխանության արդիականացվող ինստիտուտների միջև հարաբերությունների փոխակերպումների մասին տեսական գաղափարներով և եզրահանգումներով, զինվորաքաղաքացիական հարաբերությունների ուսումնասիրության արդյունքներով: Հայաստանում քաղաքագիտության զարգացումը համարվում և խթանվում է զինվորաքաղաքացիական հարաբերությունների միջազգային փորձի, առանձնահատկությունների, ՀՀ-ում դրանց քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկման փորձի ուսումնասիրության և կատարված տեսական մշակումների արդյունքներով:

Ատենախոսության կիրառական արժեքը ՀՀ-ում զինվորաքաղաքացիական հարաբերությունների արդյունավետ կանոնակարգման, հասարակության մեջ զինված ուժերի սոցիալական ինստիտուտի դերի հավասարակշռման, զինված ուժերի գործառնական շրջանակների հստակեցման և քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ և ազգային անվտանգային շահերից բխող մեխանիզմների կիրառման վերաբերյալ տեսակիրառական եզրակա-

<sup>11</sup> Siddiq A., Military inc., Inside Pakistan's Military Economy. London, Pluto Press, 2007, 292 էջ:

<sup>12</sup> St. u. Caforio G. (Ed.), Handbook of the Sociology of Military, 2003, New York, էջ 11:

<sup>13</sup> St. u. և սույն տեղում, էջ 19:

ցությունների և առաջարկների մեջ է Բացի այդ, ատենախոսական մշակումները կարող են լայնորեն կիրառվել քաղաքագիտության և հարակից գիտությունների շրջանակում, մասնավորապես՝ քաղաքական ինստիտուտների և գործընթացների, քաղաքականության մեջ բանակի դերի և նշանակության, քաղաքական վերնախավի, բանակ-հասարակություն փոխհարաբերությունների ոլորտներին վերաբերող դասընթացներում: Ատենախոսության հենքի վրա հեղինակի օժանդակությամբ արդեն իսկ ՀՀ ՊՆ Վ. Մարգարյանի անվան ռազմական ինստիտուտի բարձրագույն հրամանատարաշտաբային դասընթացի շրջանակում մշակվել և դասավանդվում է «Զինվորաքաղաքացիական հարաբերություններ» ուսումնական առարկան:

**Ատենախոսության փորձաքննությունը.** Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի 2014թ. հունիսի 19-ի նիստում: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի՝ գիտական 5 հոդվածներում, «Բանակ և հասարակություն. Ժամանակակից հիմնախնդիրներ» ուսումնական ձեռնարկի իր մասնաբաժնում, Ատենախոսության 2-րդ գլուխը (անգլերենով) ներկայացվել և փորձաքննվել է ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցի «Միջազգային հարաբերություններ և անվտանգություն» մագիստրոսական ծրագրի «Համեմատական քաղաքագիտություն» և «Համեմատական իրավունք» առարկաների շրջանակներում ներկայացված հետազոտական նախագծի տեսքով: Ատենախոսության մի շարք եզրահանգումներ քննարկվել են ՀՀ ԱՄ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի կողմից կազմակերպված խորհրդարանական լուսնների ու համաժողովների ընթացքում՝ Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնի փորձագետների հետ հանդիպումների, այլ գիտաժողովների և համաժողովների շրջանակում, այդ թվում՝ Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի կողմից 06.07.2013թ. Երևանում կազմակերպված զինծառայողների սոցիալական պաշտպանության վերաբերյալ կլոր-սեղան քննարկման ընթացքում:<sup>14</sup>

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը.** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Ծավալը կազմում է 150 էջ:

## ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության մեջ** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են օբյեկտը, առարկան, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ներկայացվում է ատենախոսության գիտական նորույթը, մեթոդաբանությունը, դրա տեսական և կիրառական նշանակությունն ու հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը:

**Առաջին՝ Զինվորաքաղաքացիական հարաբերությունների ձևավորումը** զինված ուժերի սոցիալ-քաղաքական հաստատության կայացման համատեքստում գլխում անդրադարձ է կատարվում զինված ուժերի ձևավորման գործընթացին, որը դիտարկվում է բռնության ինստիտուցիոնալացման և դրա արտաքին ու ներքին դրսևորումների, զինվորականների սոցիալական խմբի ձևավորման, զինվորական մասնագիտության ու զինվորական պրոֆեսիոնալիզմի կայացման համատեքստում:

**Զինված ուժերի կայացման և զինվորաքաղաքացիական հարաբերությունների փոխակերպման գործընթացը՝ բռնության ինստիտուցիոնալացման համատեքստում** ենթազույգը նվիրված է բռնության ինստիտուցիոնալացման գործընթացին, որը դիտարկվում է որպես զինված ուժերի կայացման և զինվորաքաղաքացիական հարաբերությունների պատմաքաղաքական փոխակերպման գործընթացի վրա անմիջական ազդեցություն ունեցող երևույթ: Եզրակացվում է, որ բռնությունը նպաստում է այժմյան ընկալմամբ զինված ուժերի կազմավորման գործընթացին, որն ուղեկցում է նաև պետությունների ձևավորմանը: Հասարակության զարգացմանը զուգընթաց փոխվում են նաև կազմակերպված խմբային բռնության դրսևորման ձևերը, իսկ հասարակության սոցիալ-քաղաքական կազմակերպման արդյունքում առանձնացվում են հատուկ ինստիտուտներ, որոնց պատվիրակվում է բռնության կիրառման գործառույթը: Ընդ որում, հասարակության զարգացման աստիճանից էլնելով՝ փոփոխության է ենթարկվում նաև բռնության ինստիտուտի գործառության շրջանակը՝ ճյուղավորվելով ըստ համապատասխան սոցիալ-քաղաքական ինստիտուտների: Հստակեցվում են ներքին և արտաքին բռնության տարանջատման, բռնության և իշխանության փոխհարաբերությունների, ինչպես նաև լեգիտիմ բռնության միջոցով հասարակարգի ապահովման հարցերը, հատուկ ուշադրություն հատկացնելով, ներքին և արտաքին բռնության տարանջատման գործոնին, քանի որ զինվորաքաղաքացիական հարաբերությունների համատեքստից այն դուրս է բերում ներքին քաղաքական բռնության գործիք հանդիսացող ոստիկանական և, որոշ դեպքերում, ազգային անվտանգության ուժերը՝ այդպիսով ազատելով ուսումնասիրության դաշտը անհարկի բարդացնող հարցերից:

**Զինվորականների սոցիալական խմբի և զինվորական մասնագիտության ձևավորումը** զինվորաքաղաքացիական հարաբերությունների համատեքստում երկրորդ ենթազույգում հիմնավորվում է, որ զինվորական պրոֆեսիոնալիզմի և զինվորական մասնագիտության ստեղծումը հիմնվում է արևմտյան արժեհամակարգում լուսավորչականության գաղափարների ամրապնդման, ինչպես նաև քիչ թե շատ կայուն աշխարհակարգի ու անվտանգային համակարգի («Կեսթալայան») ստեղծման վրա: Այդ գործընթացի համար իրական խթան են հանդիսանում բուրժուադեմոկրատական հեղափոխությունները և դրանց ուղեկցող պատերազմները կամ, որ ավելի ճիշտ է, այդ պատերազմներում անհաջողությունների դառն փորձը, որն այդ ժամանակաշրջանին բնորոշ ռազմաքաղաքական սերտաճած վերնախավին ստիպում է վերանայել բանակչինության ու պատերազմների վարման քա-

<sup>14</sup> Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիան Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի ներկայացուցչության հետ համատեղ 2013 թ. իրականացրել է ծրագիր «Սոցիալական պաշտպանության քաղաքականությունը ՀՀ Զինված ուժերում» խնդրի վերաբերյալ: Ծրագրի շրջանակում կազմակերպվել է Կլոր սեղան-քննարկում: [http://www.psa.am/?module=article&utility=show\\_article&type=static&id\\_article=7&lang=am](http://www.psa.am/?module=article&utility=show_article&type=static&id_article=7&lang=am)

ղարականությունը՝ հաշվի առնելով պետության կառավարման արդեն անմիջական մասնակցություն բերող զանգվածների (բուրժուազիայի) կարծիքը և ցանկությունները: Կենտրոնացված իշխանության առկայությունը, տարածքայնության վրա հիմնված ազգ-պետությունների վերջնական ձևավորումը, բնակչության թվի աճը, արդյունաբերականացումը ու դրանից բխող տնտեսական-ռեսուրսային պահանջարկները և, վերջապես, ժողովրդավարացումը նպաստավոր պայմաններ են առաջադրում զինվորական պրոֆեսիոնալիզմի հիմքերի ստեղծման համար: Հիմնավորվում է նաև, որ հատկապես ժողովրդավարացումն է նպաստում ժամանակակից ընկալմամբ կազմակերպված և պրոֆեսիոնալ զինված ուժերի ստեղծմանը: Նախ ժողովրդավարության ամրապնդման արդյունքում ընդլայնվում է զինված ուժերի համալրման սոցիալական հենքը, որը նպաստում է նաև գործունեության որակի աճին: Մինչ այդ, ծագման, սոցիալական կամ այլ խտրականացնող պատճառներով զինվորական ղեկավար պաշտոններ զբաղեցնելու հնարավորություն չունեցող անձինք ձեռք են բերում կրթություն ստանալու, աշխատանքի ազատ ընտրության և ծառայողական առաջխաղացման համահավասար հնարավորություններ: Ռազմամասնագիտական ուսումնական հաստատություններում կրթություն ստանալով՝ նրանք իրական մրցակցության պայմաններում աստիճանաբար դուրս են մղում զինվորական համակարգում սոցիալական դիրքի շնորհիվ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց այդպիսով հիմք դնելով պրոֆեսիոնալ սպայակազմի, զինվորական կառավարման մշակույթի և զինվորական մասնագիտության ձևավորմանը: Ձևավորվում է բյուրոկրատական, հիերարխիկ համակարգ, որի կառավարման հիմքում ընկած է բոլորի համար պարտադիր կանոնակարգը: Սոցիալական շերտավորման ու ներխմբային հարաբերություններում դեռևս առկա սոցիալ-դասակարգային լարվածության թուլացմանը նպաստում է զինվորական կառավարման համակարգի քաղաքական չեզոքության հաստատումը, որը թեև զինված ուժերի ամբողջական ապաքաղաքականացում չէր ենթադրում, սակայն պայմաններ էր ստեղծում զինված ուժերի կողմից ժողովրդաիշխանությունը փաստացի կրող, միակ լեգիտիմ պետական-քաղաքական ուժին հավատարիմ լինելու համար: Եզրակացվում է, որ պրոֆեսիոնալիզմի ու զինվորական մասնագիտության զարգացմամբ հանդերձ՝ զինծառայողների քաղաքական ներգրավման հնարավորությունները կազմակերպվածության ու համակարգային կորպորատիվիզմի, ինչպես նաև զինվորական և քաղաքական վերնախավի սերտաման պատճառով չեն նվազում: Հետևաբար, զինվորական մասնագիտության ու պրոֆեսիոնալ սպայակազմի ձևավորումը զինվորաքաղաքացիական հարաբերությունների տեսությանը սուկ մեթոդաբանական ծառայություն է մատուցում, նախ նպաստելով զինվորական սոցիալական խմբի սահմանմանը, ապա՝ «զինվորական» քաղաքացիական քաղաքացիական» քաղաքացիից ձևական առանձնացմանը և վերջապես զինվորական գործը պետության այլ անվտանգային գործառնություններից (ոստիկանական, գաղտնի-հետախուզական (intelligence), ոչ ռազմական հետախուզություն) տարանջատելու:

**Ձինվորաքաղաքացիական հարաբերությունները** երկրորդ գլուխը նվիրված է զինվորաքաղաքացիական հարաբերությունների զարգացման պատմաքաղաքական նախադրյալներին, դրանց ուսումնասիրության մեթոդաբանությանը, այստեղ տրվում է զինվորաքաղաքացիական հարաբերությունների սահմանումը, վեր են հանվում զինված ուժերի քաղաքական ներգրավվածության պատճառները, իրականացվում է զինվորաքաղաքացիական հարաբերությունների մոդելավորումը:

**Ձինվորաքաղաքացիական հարաբերությունների զարգացման պատմաքաղաքացիական նախադրյալները և ուսումնասիրության հիմնախնդիրները** ենթազվախ

շրջանակում վերլուծվում են զինվորաքաղաքացիական հարաբերությունների ձևավորման համար կարևորվող՝ ժողովրդավարության հենքի վրա խարսխվող սոցիալ-քաղաքական արդի համակարգերի ձևավորումը և դրանց չափորոշիչների սահմանադրական-իրավական ամրագրումը: Թեև այն բնորոշ է արևմտյան արժե-համակարգին, սակայն համաշխարհայնացման արդի միտումների արդյունքում միջազգային կառուցակարգերի միջոցով տարածվում է պատմականորեն իր անմիջական ազդեցության գոտիների շրջանակից դուրս՝ նպատակ ունենալով ապահովելու անվտանգային կանխատեսելիություն ու միատեսակ քաղաքական մտածողություն: Թեմայի արդիականությունը և իրական հիմնախնդիրը պատշաճ արձանագրելու համար, հիմնախնդիր ամբողջականացմանը մեծապես նպաստում է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողության եզրույթի զուգակցումը զինվորաքաղաքացիական հարաբերությունների հետ՝ որպես վերահսկման և հավասարակշռման մեխանիզմ:

Ենթազվախ շրջանակում վեր են հանվում զինվորաքաղաքացիական հարաբերությունների ոլորտում առկա մի շարք անորոշություններ, որոնք խոչընդոտում են ոլորտի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելուն, այդ թվում՝ այն, թե զինվորաքաղաքացիական հարաբերություններում ինչպես է սահմանվում զինվորական քաղաքացի, արդյո՞ք այն ներառում է բռնության լեգիտիմացված գործառույթ ունեցող բոլոր պետական ծառայությունները՝ ի դեմս բանակի, ազգային անվտանգության ուժերի, ոստիկանության գործերի և այլ հատուկ ծառայությունների, թե՛ վերաբերում է միայն երկրի արտաքին պաշտպանության գործառույթ իրականացնող մարմնին: Խնդրահարույց է նաև զինվորաքաղաքացիական հարաբերություններում քաղաքացիական քաղաքացիի սահմանման հարցը, որի լուծման փորձ է արվում:

Երկրորդ՝ **Ձինված ուժերի քաղաքական ներգրավվածության պատճառները և զինվորաքաղաքացիական հարաբերությունների մոդելները** ենթազվախը անդրադառնում է զինված ուժերի քաղաքական ներգրավման տնտեսական, քաղաքական, սոցիալ-հոգեբանական հարցերին: Տարածքային ամբողջականությունն ու բնակչության պաշտպանությունը պետության արտաքին գործառնություններից կարևորագույնն են, որոնց իրականացման նպատակով էլ հիմնականում արդարացվում է զինված ուժերի գոյությունը: Այդ հիմնական նպատակի կենսագործման համար զինված ուժերը դառնում են պետական բյուրոկրատիայի մասը՝ պահանջելով հսկայական ռեսուրսներ, որոնց ոչ ճիշտ ուղղորդման և օգտագործման դեպքում զինված ուժերը կարող են արհեստականորեն ընդլայնել օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակը և զավթել քաղաքական իշխանությունը: Դրա արդյունքում խախտվում է հասարակական-պետական հաստատությունների միջև հավասարակշռությունը, և խոչընդոտվում է հասարակական կյանքի այլ ոլորտների զարգացումը, որն էլ իր հերթին վերջիվերջո հանգեցնում է պետության գերոսպանականացմանը և ամբողջատիրական կառավարման համակարգի հաստատմանը: Այդ գործընթացները քննարկվում են քաղաքատնտեսության համատեքստում՝ «Միլիթիզմ» (Military business)՝ «Ձինվորական բիզնես» հասկացության միջոցով, որը յուրանատուկ սովորյալն տեսակի ռազմական կապիտալ է և դուրս է ռազմական բյուջեից, բայց ուղղակի կամ անուղղակի կերպով կառավարվում է զինվորականների կողմից, ձևավորվում է հանրային ոլորտից մասնավոր ոլորտ միջոցների հոսքի շնորհիվ և միտված է ծառայելու զինվորականության և նրա կողմնակիցների անձնական ու կոլեկտիվ շահերին, այդ թվում՝ տնտեսական և քաղաքական ոլորտներում: Այդ միջոցների և կապիտալի հոսք տեղի է ունենում տարատեսակ հիմնադրամների, արտոնությունների համակարգի և սո-

ցիալական փոխհատուցումների միջոցով՝ զինծառայողների «եղբայրությունների» (fraternity, братство) և զորացրված բարձրաստիճան սպայակազմի տնտեսական շահերի բավարարման նպատակով: Ուստի զինվորականությունը քայլեր է ձեռնարկում քաղաքական գործիչների և պետական ապարատի վրա ազդելու ճանապարհով ֆինանսատնտեսական ու վարչական շահ ապահովող միջոցները դեպի «Միլիթի» ուղղելու համար: Դրանով իսկ ձևավորվում է քաղաքականության մեջ զինծառայողների ներգրավվածության ընդլայնումը խթանող գործընթաց, որի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում քաղաքական լծակների օգտագործմամբ մեծացնել զինվորականների տնտեսական հնարավորությունները: Պետության ներքին հարաբերություններում զինվորական իշխանության աստիճանական ուժեղացումը հիմնված կապիտալի անվերահսկելի կուտակման վրա, զինծառայողների դերը դարձնում է ավելի ու ավելի կարևոր և ի վերջո հանգեցնում է քաղաքական թատերաբեմից այլ պետական շահառուների ու պետական-քաղաքական ուղղումներ կայացնող խմբերի հեռացման:

Մեկ այլ տեսանկյունից, զինված ուժերն ստանձնում են ազգայնականության հաստատման շարժիչ ուժի իրական դերը՝ փորձելով ներթափանցել քաղաքական ոլորտ այն ժամանակ, երբ իրենց ընկալմամբ կա ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիք, իսկ քաղաքացիական ղեկավարներն ի վիճակի չեն դիմագրավելու դրան, կամ հենց իրենք են այդ սպառնալիքի աղբյուրը, քանի որ վարում են «դավաճանական» քաղաքականություն: Ձինված ուժերի քաղաքական ակտիվացումը սովորաբար տեղի է ունենում պատերազմների հաջորդող ներքաղաքական խմբումների շրջանում: Պատերազմից հյուծված պետություններում (անկախ հաղթած կամ պարտված լինելու հանգամանքից), որտեղ այլ քաղաքական-հասարակական ուժերը վերականգնման ժամանակի կարիք ունեն, զինված ուժերը բոլորից արագ են կարողանում վերակազմավորվել և զավթել քաղաքական իշխանությունը: Եզրակացվում է, որ զինվորական և քաղաքացիական շրջանների միջև հավասարակշռված հարաբերությունների հաստատումը քաղաքականության մեջ պետութենաշինության կարևորագույն նպատակներից է, որն ուղղված է ապահովելու հասարակության բոլոր շերտերի կայուն զարգացումը: Գլոբալացման պայմաններում զինվորականների կողմից պետության քաղաքական իշխանության զավթումն այլևս չի դիտվում որպես տվյալ պետության ներքին խնդիր, այլև դառնում է մարտահրավեր միջազգային հանրության անվտանգային օրակարգի տեսանկյունից:

**Երրորդ՝ Ժողովրդավարական գործընթացները և զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողությունը:** Ձինվորաքաղաքացիական հարաբերությունների առանձնահատկությունները Հայաստանում գլխում անդրադարձ է կատարվում զինված ուժերի ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողության հարցերին, մասնավորապես՝ այդ երևույթի ծագման ու զարգացման իրավաքաղաքական նախադրյալներին, իսկ զինված ուժերի ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողության դինամիկայի հարցերն դիտարկվում են հայաստանյան փորձի շրջանակներում՝ համապատասխան առաջարկությունների մշակմամբ և հիմնավորմամբ:

Ձինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության ձևավորման նախադրյալները և դերը զինվորաքաղաքացիական հարաբերություններում ենթազլխի շրջանակում հիմնավորվում է, որ քաղաքացիական վերահսկողությունը զինված ուժերի գործունեության զապիչ գործոնն է: Դրա միջոցով հանրային կամքը պետական քաղաքականության միջոցով իրեն է ենթարկում զինված ուժերը: Ըստ այդմ՝ քաղաքացիական վերահսկողությունը ենթադրում է

զինված ուժերի ենթակայությունը քաղաքացիական իշխանությանը և թափանցիկությունը նրա հետ հարաբերություններում: Ձինված ուժերի պատասխանատվության ոլորտ պետք է կազմեն միայն այն խնդիրները, որոնք առաջադրվում են քաղաքացիական իշխանության կողմից: Մինևույն ժամանակ, առաջադրվող խնդիրներն իրականացնելիս զինվորականները պետք է բավարար ինքնուրույնությամբ օժտված լինեն՝ ռազմական նպատակներին հասնելու համար:

Եզրակացվում է, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության օգնությամբ հասարակությունը պետական քաղաքականության միջոցով իր կամքին է ենթարկում զինված ուժերը: Մինևույն ժամանակ հիմնավորվում է, որ զարգացած երկրների պարագայում խոսքը զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մասին է, մինչդեռ զարգացող ռազմականացված երկրներում ներդնելիս այն ստանում է «Ձինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողություն» ձևակերպումը: Հաշվի առնելով, որ զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության առավել ուսանելին ԱՄՆ փորձն է, առավել մանրամասն ներկայացվում է ԱՄՆ-ում զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության մեխանիզմի էվոլյուցիան և դրա հետագա փոխակերպումները:

Եզրակացվում է, որ իրավաբանական կամ քաղաքագիտական աղբյուրներում հաճախ «քաղաքացիական վերահսկողություն», «ժողովրդավարական վերահսկողություն» և «ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողություն» եզրույթները կիրառվում են որպես հոմանիշներ: Անշուշտ, բոլոր տարբերակներն էլ կարելի է համարել ընդունելի, քանի որ քաղաքացիական վերահսկողության հիմնական նպատակը ժողովրդավարական արժեքների ամրապնդումն է: Մակայն ՆՍՀՄ կամ նացիստական Գերմանիայի օրինակով վերահսկողության քաղաքացիական լինելը ինքնին չի ենթադրում, որ այն նաև ժողովրդավարական էր: Ուստի «քաղաքացիական վերահսկողություն» եզրույթն օգտագործելիս այն առավելապես դիտարկվում է իր ժողովրդավարական բաղադրիչի հետ հասկացութային միասնության մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ քաղաքացիական վերահսկողությունը դիտարկվում է բացառապես պետական մարմինների կողմից զինված ուժերի նկատմամբ վերահսկողության տեսանկյունից՝ անկախ քաղաքական վարչակարգի բնույթից:

Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ձևերը բաժանվում են երկու տիպի՝ պետական վերահսկողություն և հասարակական կամ արտապետական վերահսկողություն: Իր հերթին պետական վերահսկողությունը ենթաբաժնվում է ներգերատեսչական և վերգերատեսչական վերահսկողության: Եզրակացվում է, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն իր զարգացմանը զուգընթաց վերածվում է զինված ուժերի կառավարման քաղաքացիական հաստատությունների (պետական և ոչ պետական) մասնակցությունն ապահովող մեխանիզմների, որոնց նպատակներն են՝ պետության քաղաքականությանը զինված ուժերի մասնակցության սահմանափակումը, հասարակության մեջ զինված ուժերի նկատմամբ վստահության մթնոլորտի ստեղծումը, զինված ուժերի գործառույթների իրականացման օրինականության ապահովումը, ինչպես նաև զինծառայողների իրավունքների պաշտպանությունը:

Ատենախոսության վերջին՝ Ձինվորաքաղաքացիական հարաբերությունների և զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության առանձնահատկությունները Հայաստանում ենթազլխում ուսումնասիրվում է զինվորաքաղաքացիական հարաբերությունների զարգացման դինամիկան Հայաստանի երրորդ հանրապետությունում, որը դիտարկվում է պատերազմի ու հետպատերազմական շրջանի համեմատական վերլուծության, զինվորական մշակույթի

ձևավորման փորձերի, ժողովրդավարացման գործընթացի և զինված ուժերի բարեփոխումների համատեքստում, որպես զինվորաքաղաքացիական հարաբերությունների և զինված ուժերի ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողության գործընթացի վրա ազդեցության գործոններ:

Ենթազիլի շրջանակում, որպես ՀՀ զինված ուժերի քաղաքականացման հարցում կարևոր դերակատարում ունեցող խումբ առանձնացվում են կամավորականները, քանի որ նրանց շարքերում մեծ թիվ էին կազմում և որակ էին ստեղծում նախկին հասարակական-քաղաքական գործիչները (ավանդական կուսակցությունների ներկայացուցիչներ, նորաստեղծ քաղաքական ուժերի համակիրներ, հրապարակախոսներ և այլք): Պատերազմի ավարտից հետո նրանք կարող էին անմիջապես վերադառնալ քաղաքականության, սակայն հաշվի առնելով պետական կառավարման համակարգի սաղմնային վիճակը, պետական մարմինների ու քաղաքական ինստիտուտների ենթակառուցվածքային անկատարությունը նրանց մեծ մասը նախընտրում էր ձևականորեն մնալ զինված ուժերում, որը քիչ թե շատ ձևավորված ու ազդեցիկ կառույց էր, ուներ բավարար վարչատնտեսական ռեսուրսներ և լծակներ, որոնք կարող էին ուղղվել քաղաքական հարցերում որոշումների ընդունման գործընթացի վրա ներազդելուն:

Միաժամանակ հիմնավորվում է, որ ՀՀ զինված ուժերի ձևավորման հիմքում ընկած պայմանական երկու խմբերի՝ նախկին խորհրդային սպաների և կամավորների միջև տարաձայնությունները զինվորական կառավարման համակարգի վերաբերյալ մեթոդական տարակարծությունների շուրջ բանավեճի շրջանակից դուրս չեն եկել և լուրջ ներհամակարգային բախումների չեն հանգեցել, քանի որ ներքին համաձայնությամբ զինվորական կառավարման համակարգի նորմավորման ու կանոնակարգման, ռազմատեխնիկական, մարտավարական ու օպերատիվ հարցերի լուծման իրավունքը կամավոր զիջելով խորհրդային կադրային սպաներին կամավորականները առանձնում են զինված ուժերի քաղաքական դեկավարման և ռազմավարական հարցերը լուծողի դերը:

Հայաստանում զինվորաքաղաքացիական հարաբերությունների զարգացման խնդիրներից մեկն է դիտվում հայկական տիպային զինված ուժերի ստեղծման, զինվորական պրոֆեսիոնալիզմի ու զինվորական մշակույթի ձևավորման գործընթացի անավարտությունը: Նշվում է, որ 1990-ականներից սկիզբ առած հայկական զինված ուժերի ձևավորման գործընթացի վրա մեծ ազդեցություն են ունեցել նախկին խորհրդային զինվորական ավանդույթները, որոնք, հատկապես զինվորական ոլորտը կարգավորող իրավական նորմերի տեսանկյունից, ժամանակի տղության պատճառով չեն տեղայնացվել ու հարմարացվել ազգային առանձնահատկություններին: Դա հանգեցնում է ձևական առումով զինված ուժերի գործունեությունը կարգավորող իրավական նորմերի և զինվորական կյանքի առօրյա հարաբերությունների իրական կարգավորիչ հանդիսացող բարոյական, ավանդույթային կամ սովորույթային նորմերի բախման: Կադրային զինվորական չհանդիսացող նախկին կամավորականների մի հատվածի համար խորհրդային բանակի իրավական կարգավորիչները խորթ էին ու դժվարընդունելի, իսկ սեփականը ստեղծելու փորձ և ռեսուրս առկա չէր, ուստի այդ կատեգորիային պատկանող սպայակազմի կողմից իրավական նորմերից դուրս ստեղծվեց բարոյաբժեքային ուրույն համակարգ խարսխված քրեապես պատժելի վարքի, սեփական ազդեցության գոտում անվերապահ իշխանության ու կեղծ առաջնորդության արժեքների վրա:

Եզրահանգվում է, որ չնայած միջին տարիքի զինծառայողների մի խմբի շրջանում զինվորական մշակույթի ընկալման հարցում խնդիրներին, նրանց կողմից նախկին զինվորական-կլանային պատկանելությունը որպես խմբային նույնակա-

նացման ցուցիչ դիտելու պրակտիկային՝ զինված ուժերի քաղաքական անհարկի ակտիվացման միտումներ չեն նկատվում, քանի որ արդյունավետ գործում են թե՛ ներգերատեսչական և վերգերատեսչական և թե՛ քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները: Մակայն առաջարկվում են իրավիճակի բարելավման նոր մեխանիզմներ: Օրինակ՝ զինվորաքաղաքացիական հարաբերությունների և զինված ուժերի ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողության արդյունավետության ամրապնդմանը կարող է նպաստել առանձին ստորաբաժանումների կամ տարածքային կառավարման մարմինների ղեկավարների անձնական հաշվետվողականության մեխանիզմի ներդրումը, որը պետք է ամրագրվի թե՛ իրավական ակտերում, որպես պարբերական հաշվետվություններ ներկայացնելու պահանջ, և թե՛ վարքի կանոնակարգերում ու զինվորական սովորույթներում, որպես զինվորական էթիկայի և պրոֆեսիոնալիզմի զարգացման ազդակ:

Ատենախոսության **Եզրակացության** մասում ներկայացվում են կատարված եզրահանգումները, այդ թվում.

1. Ձինված ուժերի կողմից քաղաքական իշխանության զավթումը իրենց քաղաքական ներգրավվածության թույլատրելի սահմանների միտումնավոր գերազանցումն է կամ սեփական քաղաքական դերակատարության շահարկումը՝ սոցիալ-քաղաքական շահաբաժիններ քաղելու նպատակով, բայց ոչ զինված ուժերի անդամների կողմից քաղաքական գործընթացներին մասնակցությունը կամ իշխող վերնախավում զինվորական ղեկավարների ներգրավվածությունը:

2. Ձինված ուժերի կողմից բռնության կիրառման գործառույթի սահմանափակումների համակարգը ժամանակակից պետության անվտանգության, ինչպես նաև իշխանության բոլոր ճյուղերի համահարթեցման և դրանով իսկ՝ արդյունավետ գործառնման նախապայմաններից է, որը հիմնվում է բռնության կիրառման արտաքին և ներքին ուղղությունների տարանջատման վրա: Ձինված ուժերին միայն արտաքին բռնության կիրառման գործառույթի վերապահումը կանխում է բանակի կողմից սեփական բնակչության հանդեպ բռնության կիրառման հավանականությունն ու քաղաքական նպատակներով զինված ուժերի՝ որպես ներքին բռնության գործիքի օգտագործումը:

3. Պետության ներքին անկայունության և կենտրոնական իշխանությունների կողմից կառավարման թերի համակարգի պայմաններում զինված ուժերն իրենց կայացման համար անհրաժեշտ պայմաններ և պատվեր չեն ստանում, ինչը ստեղծում է զինվորաքաղաքացիական հարաբերություններում հավասարակշռության խախտման երկու տիպի ռիսկեր՝ a) հասարակության մեջ ինքնաբերական կերպով կարող են ձևավորվել "քվազի-զինվորական" խմբավորումներ, որոնք այլ խմբերի նկատմամբ բռնություն են կիրառում՝ ելնելով նեղ խմբային շահերից, b) առկա զինված ուժերի ներկայացուցիչները, օգտվելով պետության կենտրոնական իշխանությունների թուլության և պետության ներքին քաղաքականության անկայունությունից, կարող են դառնալ իշխանությունների կողմից տարվող ներքաղաքական ուժային-ճնշող գործիք, ինչպես նաև յուրացնել ամբողջ իշխանությունը:

4. Ձինծառայողների սոցիալական խումբն առանձնացնելիս, հաշվի առնելով գորակոչի ու գորացման հետևանքով տեղի ունեցող մարդկային ռեսուրսի հոսունությունը որպես խմբային նույնակա-

նելիությունը ոչ թե զինված ուժերին ընդհանրապես, այլ առանձնապես սպայակազմին: Անվտանգային-ուժային այլ կառույցներից տարբերվող, ոստիկանական կան գործառույթներից տարանջատված զինվորական մասնագիտական ինքնուրույն սոցիալական հենքը կազմում է պրոֆեսիոնալ կրթություն ստացած սպայակազմը, որի շուրջ էլ կառուցվում է զինված ուժերի սոցիալական ինտիմությունը:

5. Այն բոլոր դեպքերում, երբ պետությունը հակադրվում է հասարակությանը /մարդու իրավունքների և ազատությունների խախտումներ, կամայականություններ, ճնշումներ, և այլն/, զինված ուժերը իրենց՝ բռնություն կիրառելու գործառույթով դառնում են պետության ներքին բռնության իրականացման գործիք: Բացի այդ, հնարավոր է, որ զինվորականներն իրենք իրենց նախաձեռնությամբ իրականացնեն ներպետական բռնություն՝ իշխանությունների կամ հասարակության դեմ՝ օգտագործելով բռնության գործիքարանն ու ընդլայնելով իրենց վերապահված լիազորությունների շրջանակը: Ուստի, անհրաժեշտ է զինված ուժերի վերահսկողություն ոչ միայն պետության, այլ նաև հասարակության մակարդակում:

6. Ձինվորականների կողմից կառավարվող, սակայն զինված ուժերի գործառույթներից չբխող և մասնավոր շահերը սպասարկող, վարչական ռեսուրսների չարաշահումից բխող ֆինանսատնտեսական գործունեությունը և դրանից զույգող և ընդլայնվող կապիտալը՝ «Ձինվորական բիզնեսը» («Military business»), քաղաքականության մեջ զինձառայողների ներգրավվածության ընդլայնումը խթանող գործոն է, քանի որ դրա շնորհիվ հնարավորություն է ստեղծվում քաղաքական լծակների օգտագործմամբ մեծացնելու տնտեսական հնարավորությունները: Ձինված ուժերի ներկայացուցիչների կողմից զինվորական բիզնեսի իրականացումը ստեղծում է մի փակ փուլաշրջան, երբ զինձառայողների տնտեսական շահերը ենթադրում են նրանց ավելի մեծ քաղաքական ներգրավվածություն, իսկ ընդլայնված քաղաքական մասնակցությունը մեծացնում է նրանց եկամուտները: Պետական բազմալորտ համակարգի ցածր մակարդակի կառավարումը, կողմնակալ տնտեսական բաշխումը, մենաշնորհայնացումը և տնտեսական մրցակցության անարդարությունը, բնական ռեսուրսների թերի կառավարումը, զինվորական պրոֆեսիոնալիզմի նվազումը և, ի վերջո, հասարակության ռազմականացման մեծ շարժառիթավորումը (երաշխավորված բարեկեցության միջավայր, մեծ սոցիալական արտոնություններ և գործարարությամբ զբաղվելու համար էական նախադրյալներ ու հովանի) զինձառայողների քաղաքական ներգրավվածությունը վերածում են պետության համակողմանի կայուն զարգացման համար լուրջ խոչընդոտի:

7. Արժեքների և նորմերի լիբերալիզացման զուգումը միտումներին զուգընթաց անձի իրավունքների և հիմնարար ազատությունների ընդլայնումը զինված ուժերում հանգեցնում է զինվորականների քաղաքական սոցիալականացման մակարդակի աճին և նպաստում է զինվորական արհմիությունների, սոցիալացիաների կամ այլ լոբբիստական խմբերի հասարակական-քաղաքական ակտիվացմանը: Սակայն այս փոխակերպումները չպետք է դիտել որպես զինվորականների կողմից քաղաքական իշխանության զավթման ուղղակի նախապայման: Ընդհակառակը՝ զինվորականների համար այլ քաղաքացիների հետ նույն իրավունքներից օգտվելու հնարավորությունների ընձեռումը կարող է նպաստել զինձառայողների

մոտ իրենց ոլորտին ավելի սերտ նվիրվելու, սեփական զինվորական ինքնությունը կառուցելու, այլ ոլորտները որպես ավելի ցանկալի կամ նախընտրելի չդիտարկելու համար:

8. Պատերազմից հյուսված պետություններում (անկախ հաղթած կամ պարտված լինելու հանգամանքից), որտեղ այլ քաղաքական-հասարակական ուժերը վերականգնման ժամանակի կարիք ունեն, զինված ուժերը բոլորից արագ են կարողանում վերականգնվողովել և զավթել քաղաքական իշխանությունը: Առանձնացվել է քաղաքական իշխանության զավթման մի քանի պատճառ, այդ թվում՝ ա) տնտեսական, երբ զինված ուժերը, լինելով պետության առավել կազմակերպված և բռնության կարողությամբ օժտված կազմակերպություն, առաջնորդվելով հավաքական շահերով, ձգտում են իրենց հսկողության տակ վերցնելու առկա սուղ միջոցների կառավարումը: բ) Հոգեբանական՝ պայմանավորված անձնավորության մտախմբմամբ, բարձր հավակնոտությամբ, երբ պատերազմից հետո զինված ուժերի կազմից մի ակտիվ խումբ փորձում է իր ներկայիս համեմատաբար պասիվ պետական դերը (քանի որ պատերազմում զինված ուժերը հիմնական դերակատարներն էին) փոխհատուցել հասարակական-քաղաքական ակտիվությամբ՝ դրա հետ մեկտեղ պաշտպանելով այլ զինձառայողների շահերը:

9. Գլոբալացման պայմաններում պետության իշխանության համակարգում զինվորականների տեղի և դերի գերակայությունը բերում է այդ պետության ոչ միայն ներքին, այլև արտաքին քաղաքականության համապատասխան փոխակերպումներին, ինչն իր հերթին հանգեցնում է միջազգային հանրության կողմից այդ պետության ընկալմանը՝ որպես միջազգային անվտանգության և խաղաղության սպառնալիք: Նա կարող է միջազգային հանրության կողմից այդ պետության ներքին գործերին միջաժամելու (ոչ միշտ՝ այդ պետության շահերից բխող), և այդ պետության ռազմական վարչակարգը տապալելու պատճառ/առիթ դառնալ: Այսպիսով, միջազգային հանրությունը աստիճանաբար վերածվում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության արտաքին գործիքի:

10. Ձինվորաքաղաքացիական հարաբերությունները նորմի են սահմանվել որպես զինված ուժերի և քաղաքական իշխանության՝ ի դեմս պետական իշխանությունն իրականացնող վարչական ապարատի միջև փոխհարաբերությունների հավասարակշռման համակարգ, որի գործառնման նպատակն է՝ բացառել զինված ուժերի կողմից քաղաքական իշխանության զավթումը կամ քաղաքական ուրոշումների կայացման վրա ապօրինի ազդեցությունը: Ձինվորաքաղաքացիական հարաբերությունների հիմքում պետք է դրված լինի այն, որ զինվորականները բավարար չափով ունակ են կատարելու այն ամենը, ինչ իրենց հանձնարարում են քաղաքացիական ղեկավարները, և բավարար չափով ենթակա են քաղաքացիական իշխանություններին, որպեսզի կատարեն միայն այն, ինչ իրենց հանձնարարվում է:

11. Ձինվորաքաղաքացիական հարաբերությունների մոդելավորման արդյունքում հանգում ենք հետևյալ տարբերակներին. ա) զինվորականությունը քաղաքացիական վերահսկողության ներքո, բ) քաղաքացիական իշխանության

տիրույթը, զինվորականության վերահսկողության ներքո, Կ) անխիճանություն՝ նրանց միջև դժվար կառավարելի և ոչ հստակ հարաբերություններ:

12. Քաղաքացիական վերահսկողությունը զինված ուժերի գործունեության զսպիչ գործոնն է: Այն գործիք է, որով հանրային կամքը պետական քաղաքականության միջոցով իրեն է ենթարկում զինված ուժերը: Ըստ այդմ՝ քաղաքացիական վերահսկողությունը ենթադրում է զինված ուժերի ենթակայությունը քաղաքացիական իշխանությանը և թափանցիկությունը նրա հետ հարաբերություններում: Մակայն վերահսկողության քաղաքացիական լինելը ինքնին չի ենթադրում, որ այն նաև ժողովրդավարական է: Այդ պատճառով «քաղաքացիական վերահսկողություն» եզրույթն օգտագործելիս այն դիտարկվում է ժողովրդավարական բաղադրիչի հետ հասկացության միասնության մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ քաղաքացիական վերահսկողությունը դիտարկվում է բացառապես պետական մարմինների կողմից զինված ուժերի նկատմամբ վերահսկողության տեսանկյունից՝ անկախ քաղաքական վարչակարգի բնույթից: Ուստի, զինված ուժերի վերահսկողության լայն իմաստ հաղորդելու առումով առավել ընդունելի է «քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողություն» եզրույթի կիրառումը:

13. Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ձևերն են՝ պետականը և հասարակականը (կամ արտապետական): Պետական վերահսկողությունն իրականացվում է պետական իշխանության բարձրագույն մարմինների կողմից ինչպես անմիջականորեն, այնպես էլ մշտապես գործող վերահսկիչ (հսկողական) մարմինների միջոցով (տեսություններ, գործադիր իշխանության կենտրոնական մարմիններ, զինվորական վերահսկողական մարմիններ և այլն): Պետական վերահսկողական գործունեությունը բաժանվում է վերգերատեսչական և ներգերատեսչական վերահսկողության, որի տարանջատիչ հատկանիշը վերահսկողություն իրականացնողի և զինված ուժերի միջև ուղղակի կապն է կամ դրա բացակայությունը: Հասարակական կամ արտապետական վերահսկողությունը ներառում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների (մամուլի, հասարակական կազմակերպությունների), եկեղեցու, անհատ քաղաքացիների օրենքով չարգելված վերահսկողական նախաձեռնությունների ու գործառնությունների իրականացումը (տեղեկատվության ստացման ազատություն, պետիցիաներ, հանրային նախաձեռնություններ և այլն):

14. Հայաստանյան իրականությունում զինվորաքաղաքացիական հարաբերությունների ամրապնդմանը խոչընդոտում է հայկական տիպային զինված ուժերի ստեղծման, զինվորական պրոֆեսիոնալիզմի ու զինվորական մշակույթի ձևավորման գործընթացում խորհրդային զինվորական ավանդույթների ուղղակի կրկնօրինակման և, մյուս կողմից, այդ մշակույթը չներկայացնող սպայակազմի և զորակոչային զանգվածի կողմից իրավական նորմերից դուրս՝ քրեական պրակտիկայի և սեփական ազդեցության գոտում անվերապահ իշխանության ու կեղծ առաջնորդության արժեքների վրա ստեղծված բարոյաթմբային ուրույն համակարգի մեխանիկական գուգամիտումը:

**Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակված են հեղինակի հետևյալ աշխատություններում.**

#### **Գիտական հոդվածներ.**

1. Ավետիսյան Ա. Ռ., «Զինվորական կարգապահության ամրապնդման, զինվորական կառավարման համակարգի բարելավման և զինված ուժերում իրավակարգի պաշտպանության որոշ հարցեր՝ միջազգային անվտանգային զարգացումների համատեքստում», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 3-4 (81-82), Երևան, 2014, էջ 43-52:

2. Ավետիսյան Ա. Ռ., «Զինվորաքաղաքացիական հարաբերությունների զարգացման պատմաքաղաքական նախադրյալներն ու ուսումնասիրության հիմնախնդիրները. Հայաստանի փորձի վերլուծություն», Տարածաշրջանային խնդիրներ գիտական ամսագիր, 1(4), Երևան, 2014, էջ 107-122:

3. Ավետիսյան Ա. Ռ., «Բռնության դերը զինված ուժերի սոցիալական ինստիտուտի ձևավորման և զինվորաքաղաքացիական հարաբերությունների մեկնաբանման գործում», ԵՊՀ հրատարակչություն, Բանբեր Երևանի Համալսարանի, 140.5, Երևան, 2013, էջ 22-31:

4. Ավետիսյան Ա. Ռ., «Զինվորաքաղաքացիական հարաբերությունների որոշ մոդելներ ՀՀ զորային կառույցի արդիականացման տեսանկյունից», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 1-2 (67-68), Երևան, 2011, էջ 62-73:

5. Ավետիսյան Ա. Ռ., «Զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության հարցի շուրջ», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2-3 (56-57), Երևան, 2008, էջ 76-88:

6. Ավետիսյան Ա. Ռ., «Զինվորական օմբուդսմենի հաստատություն. դերն ու գործունեության առանձնահատկությունները», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 4 (54), Երևան, 2007, էջ 47-51:

7. Ավետիսյան Ա. Ռ., «Մարդու իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում», ՀՀ զինվոր դատախազության գիտագործնական եռամսյա տեղեկագիր «Օրինականություն», 37, Երևան, «Տիգրան Մեծ», 2006, էջ 49-54:

#### **Ուսումնամեթոդական աշխատություններ**

8. Աթանեսյան Ա., Ավետիսյան Ա., Մկրտիչյան Ա., Մարգարյան Վ., Մահակյան Ա., Մախալկինա Մ., «Բանակ և հասարակություն. Ժամանակակից հիմնախնդիրներ» ուսումնական ձեռնարկ. (Ա. Աթանեսյանի խմբագրությամբ), Երևան, Աստղիկ հրատ., 2013, 312 էջ:

Аветисян Александр Робертович

## ВОПРОСЫ ВОЕННО-ГРАЖДАНСКИХ ОТНОШЕНИЙ И ГРАЖДАНСКО-ДЕМОКРАТИЧЕСКОГО КОНТРОЛЯ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – «Политические институты и процессы». Защита состоится 17.12. 2014г. в 16:00 часов на заседании специализированного совета 056 «Политические науки и международные отношения» ВАК РА, действующего по адресу: ул. К. Улици 56/6, Ереван 0037, Республика Армения.

### Резюме

Основной целью диссертационного исследования было выявление объективных закономерностей возникновения и развития военно-гражданских отношений, а также особенностей возникновения, институционализации и функционирования института гражданско-демократического контроля над вооруженными силами. В работе был поставлен ряд задач, в т.ч.: 1) выявление процесса становления вооруженных сил как социального института и их формального выделения из системы гражданских отношений, 2) выявление роли института насилия в формировании современных государств и вооруженных сил, 3) разграничение внутренних и внешних проявлений применяемого государством легитимного насилия, уточнение рамок участия в данном процессе вооруженных сил, 4) выявление закономерностей формирования и развития профессии военного и военного профессионализма, 5) определение предметной области военно-гражданских отношений, критериев разделения «военной» и «политической» составляющих, а также угроз и рисков, связанных с нарушением равновесия во взаимоотношениях между армией и обществом, 6) обоснование необходимых условий вовлечения вооруженных сил в политический процесс, выявление предпосылок и причин захвата политической власти военными, 7) определение содержания гражданско-демократического контроля над вооруженными силами, разграничение понятий «гражданского» и «демократического» контроля, 8) выявление механизмов гражданско-демократического контроля над вооруженными силами и их роли в обеспечении равновесия военно-гражданских отношений, 9) анализ международного опыта, а также опыта Республики Армения в сфере военно-гражданских отношений, 10) выявление динамики возникновения и развития гражданско-демократического контроля над вооруженными силами в РА, 11) разработка механизмов обеспечения баланса в военно-гражданских отношениях и повышения эффективности гражданско-демократического контроля над вооруженными силами.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка литературы.

Во **введении** обоснована актуальность проблемы, представлены степень ее разработанности, научная новизна, объект, предмет, цели и задачи исследования, методология исследования, а также апробация работы.

В первой главе - **Формирование военно-гражданских отношений в контексте становления социально-политического института вооруженных сил**, рассматривается процесс становления вооруженных сил в результате институционализации насилия и разделения внутренней и внешней сфер осуществления легитимного насилия. Здесь рассматривается процесс формирования социальной группы военных, а также становления профессии военного и военного профессионализма. В первой подглаве – **Процесс становления вооруженных сил и трансформации военно-гражданских отношений в контексте институционализации насилия**, процесс институционализации насилия рассматривается в качестве исторически обуслов-

ленного фактора становления и трансформации вооруженных сил и военно-гражданских отношений. В частности, обосновывается, что развитие общества сопровождалось трансформацией организованного группового насилия, что в конечном счете привело к возникновению государства в современном виде, монополизировавшего легитимное право применения насилия, а также вооруженных сил. Во второй подглаве – **Формирование социальной группы военных и профессии военного в контексте военно-гражданских отношений**, обосновывается, что возникновение профессии военного и военного профессионализма основано на западной просветительской мысли и современной относительно стабильной Вестфальской системе международной безопасности. Также обосновывается роль демократии в становлении современных вооруженных сил.

Вторая глава – **Военно-гражданские отношения**, посвящена историко-политическим предпосылкам становления и развития военно-гражданских отношений, методологии их исследования в политической науке, дается определение военно-гражданских отношений, осуществляется моделирование военно-гражданских отношений. В первой подглаве – **Историко-политические предпосылки и проблемы исследования развития военно-гражданских отношений**, анализируется процесс становления демократических институтов и их роль в формировании современных вооруженных сил. Осуществляется попытка синтеза военной и гражданской компонент в системе военно-гражданских отношений. Во второй подглаве – **Причины политического вовлечения вооруженных сил и модели военно-гражданских отношений**, выявляются экономические, политические и социально-психологические факторы участия вооруженных сил и военных в политических процессах, а также риски, связанные с возможным нарушением равновесия в военно-гражданских отношениях. В качестве одного из факторов риска рассматривается «военный бизнес», его причины и механизмы.

В третьей главе – **Демократические процессы и гражданско-демократический контроль над вооруженными силами**. Особенности военно-гражданских отношений в Армении, исследуются правовые и политические предпосылки военно-гражданских отношений, а также выявляются особенности, причины и динамика трансформирования гражданско-демократического контроля над вооруженными силами в Республике Армения. В первой подглаве - **Предпосылки и роль гражданско-демократического контроля над вооруженными силами в военно-гражданских отношениях**, обосновываются границы самостоятельности вооруженных сил и механизмы ограничения их политического участия системой механизмов гражданского контроля. Обосновывается роль гражданского контроля в обеспечении эффективности политического управления, а также различие между гражданским и гражданско-демократическим контролем над вооруженными силами, в зависимости от политического режима в данном государстве. Во второй подглаве – **Особенности военно-гражданских отношений и гражданско-демократического контроля над вооруженными силами в Армении**, выявляются особенности становления и функционирования системы военно-гражданских отношений и механизмов гражданско-демократического контроля над вооруженными силами в условиях третьей Республики Армения, учитывая процесс независимости, военные действия и послевоенные процессы. Здесь анализируется роль военной элиты в политическом управлении Армении, выявляются механизмы включения военных в политическую элиту, а также ограничения роли вооруженных сил и военных в системе политического участия.

В **заключении** обобщаются теоретические выводы и практические предложения диссертационного исследования.

Aleksandr Avetisyan

THE ISSUES OF CIVIL-MILITARY RELATIONS AND CIVIL-DEMOCRATIC  
CONTROL OF THE ARMED FORCES

Dissertation under 23.00.02 cipher "Political Institutions and Processes" to be awarded PhD in Political Science. The public defence will take place on 17.12.2014 at 16:00, in the Institute for National Strategic Research Studies, MOD RA at the 056 "Political Science and International Relations" HAC Specialized Chamber Session.

(Address: K. Ulnetsi street 56/6, Yerevan 0037, Republic of Armenia)

Resume

The main objective of the dissertation is to identify the objective regularities of emergence and development of civil-military relations and to account for the role and characteristics of the institute of civil-democratic control of the armed forces in that developments. The research is focused on detection of less examined issues and gaps in the theory of civil-military relations in order to strengthen political and interdisciplinary basis of the selected area, to clarify standardization models of civil-military relations, as well as, based on theoretical outcomes, suggest appropriate practical political landmarks to avoid breach of balance in civil-military relations.

The structure of the dissertation corresponds with the objectives and main tasks of study. It consists of the introduction, three chapters, conclusion and bibliography. In the introduction the relevance of the study is substantiated, the main goals and objectives are identified, the methodology and the brief description of used literature are presented, as well as theoretical and practical importance of the research is discussed.


The first chapter of the dissertation entitled "The formation of civil-military relations within the context of structuralization of the social-political institution of the armed forces" examines the process of the formation of the armed forces as a social-political institution, paying special attention to the institutionalization of the violence and its internal and external implications, establishment of the social group of military, development of military profession and military professionalization. The process of institutionalization of violence is observed to be a crucial factor having direct influence on structuralization of the armed forces and historical-political transformation of civil-military relations. It also examines that establishment of military profession and development of military professionalization are based on strengthening of enlightenment ideology in western value system, as well as creation of more or less stable world order and international security system, particularly "Westphalian system". The chapter justifies that even though both institutionalized violence and established professionalized armed forces are important factors in research of civil-military relations, their main role is still methodological, helping to clearly define the military social group, thereby

formally dividing the elements of "civil" and "military" within the context of civil-military relations, as well as separating the functional frame of military from other security oriented state businesses, such as police, intelligence, etc.

The second chapter entitled "Civil-military relations" is dedicated to historical-political prerequisites of the development of civil-military relations and their research methodology. It also covers the definition of civil-military relations, finds out the reasons of political negative engagement of armed forces, and systemizes the modeling of civil-military relations. The chapter clarifies uncertainties through an in-depth examination of the main notions of civil-military relations, trying to avoid misunderstanding and misinterpretation of basic formulas and phenomena in a given field of studies. The Chapter examines also the political, economical, social and psychological reasons of rigid engagement of armed forces in political matters of state building and holding. The new approach is also discussed and developed describing typical post-war periods when the armed forces regardless of their success or failure in war-making take the lead of nation, because of their capacity to rebuild internal order in social organization and maintain comparative stability in society, and, as a consequence, running national wealth and other resources. The chapter comes to the conclusion that the breach of balance in civil-military relations is no longer solely the matter of concern of a single state or region, and because of globalization and spread over effect of transnational treats gradually becomes the problem of entire world order.

The third Chapter entitled "Democratization processes and civil-democratic control of the armed forces: The specificities of civil-military relations in Armenia" discusses the process of establishment of civil-democratic control of the armed forces as a tool to balance civil-military relations, focusing on issues of legal-political preconditions of that development, as well as analyzes entire dynamics of civil-military relations on case study basis taking into consideration the experience of Armenian Third Republic. It concentrates on distinction of the civil control of the armed forces from the democratic control, clearly pointing out the main differences between them. This examination is based on a deep study of classic approaches to civil control in western states, typically oriented on the view that civil control means control of state civilian bodies (government, parliament etc.), which proves not to be enough in transitional societies, where the civil control should be supported by other democratic elements, such as civil society institutions, ombudsman type bodies etc. The conclusion is that civil control is not always democratic, thus the notion of civil-democratic control is proposed to be more accurate in order to describe the phenomenon properly, and outline the fitting requirements necessary for the balance of civil-military relations. Based on the above mentioned, new typology of civil-democratic control mechanisms is proposed, where the main distinction element is whether the mechanism is state owned or conducted by civil society. All dynamics and outcomes of study made in dissertation is examined and reflected in research of Armenian experience, where main gaps and shortages are identified and practical development strategies are suggested.

The conclusion sums up the main outcomes of the research.





ՀՀ Ազգային գրադարան



NL0657604

